ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 69 - Ա 07 փետրվարի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 210-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի և 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 32-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի, 9-րդ, 11-րդ և 17-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի Հ. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 9-ի N 45/3-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 210-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում

1) «Մանվելովա Զոյա Գուրգենի մանկխորհրդի ներկայացուցիչ/» բառերից հետո լրացնել «երեք տարի ժամկետով» բառերով.

2) «Գագյան Շուշանիկ Վլադիմիրի /ծնողխորհրդի ներկայացուցիչ/» բառերից հետո լրացնել «երեք տարի ժամկետով» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

07.02.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 3710836069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ